

**ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐԱԿՄԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳՆԱՀԱՏՈՂԱԿԱՆ
ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐ) ՊԱՐՈՒՆԱԿՈՂ
ՀԱՆՑԱԿԱԶՄԵՐՈՒՄ
(ՀՀ ԳՈՐԾՈՂ ՔՐԵՆԱԿԱՆ ՕՐԵՆՍԱԳՐՔԻ ԵՎ ՆՈՐ
ՕՐԵՆՍԱԳՐՔԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԿԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ)**

Աննա Վարդապետյան

*ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի դոցենտ,
իրավ. գիտ. թեկնածու*

Լալա Բեգոյան

*Վարչապետի աշխատակազմի
իրավաբանական վարչության ավագ իրավաբան*

Հանցագործության որակումը կատարված արարքի և քրեաիրավական նորմով նախատեսված հանցակազմի հատկանիշների միջև հստակ համապատասխանության հաստատումն ու իրավաբանական ամրագրումն է¹: Հանցագործության որակումը մի շարք փուլեր է անցնում, որոնք ուղղված են կատարված արարքի փաստական կազմի և կոնկրետ քրեաիրավական նորմով նախատեսված հանցակազմի միջև համապատասխանության սահմանմանը: Հանցագործությունների որակման փուլերից առաջինը քրեաիրավական նորմի ընտրությունն է, որը, ի թիվս այլնի, ենթադրում է քրեական օրենսգրքի նորմի, այդ թվում՝ գնահատողական հաս-

¹ Տե՛ս **Кудрявцев В.Н.** Общая теория квалификации преступлений. — М.: «Юридическая литература», 1972. էջ 8, **Кудрявцев В. Н.** Общая теория квалификации преступлений. — 2-е изд., перераб. и дополн. — М.: «Юристь», 2001. էջ 5: «Հանցագործությունների որակում» հասկացության բնորոշումների վերաբերյալ առավել մանրամասն տե՛ս նաև **Герцензон А.А.** Квалификация преступлений. М., 1947, **Коржанский М.И.** Квалификация преступлений. Киев, 1998. էջեր 10–11, **Тарарухин С.А.** Понятие и значение квалификации преступлений: Учебное пособие. Киев, 1990. էջ 6, **Таганцев Н.С.** Русское уголовное право. Часть Общая. Т. I. СПб., 1902. էջ 336, **Таганцев Н.С.** Русское уголовное право: Лекции. Часть Общая: В 2 т. М., 1994. էջ 36, **Игнатов А.Н., Костарева Т.А.** Уголовная ответственность и состав преступления: Лекция. М., 1996. էջ 27, **Гонтарь И.Я.** Преступление и состав преступления как явление и понятие в уголовном праве. Владивосток, 1997. էջ 10, **Пионтковский А.А.** Учение о преступлении. М., 1961. էջ 120, **Навроцкий В.О.** Теоретические проблемы правовой квалификации. Киев, 1999. էջ 136, **Маритчак Т.М.** Ошибки в квалификации преступлений. Киев, 2004, **Таганцев Н.С.** Курс русского уголовного права. Часть Общая. СПб., 1874. էջ 5, **Кистяковский А.О.** Элементарный учебник общего уголовного права. СПб., 1875. էջ 59, **Корнеева А.В.** Теоретические основы квалификации преступлений: Учебное пособие. М., 2006. էջ 32, **Брайнин Я.М.** Уголовная ответственность и ее основание в советском уголовном праве. М., 1963:

կացություններ (հատկանիշներ) պարունակող նորմի մեկնաբանություն¹: Ինչպես ՀՀ գործող քրեական օրենսգրքի, այնպես էլ սույն թվականի մայիսի 27-ին ստորագրված, սակայն, դեռևս ուժի մեջ չմտած ՀՀ քրեական նոր օրենսգրքի² (այսուհետ նաև՝ Նոր օրենսգրք) բազմաթիվ հանցակազմերում օգտագործված են գնահատողական հասկացություններ (հատկանիշներ): Այս համատեքստում հարկ է ընդգծել, որ գնահատողական հասկացությունների կիրառման հետ կապված որոշ խնդիրներ լուծում ստացել են Նոր օրենսգրքում: Ի տարբերություն ՀՀ գործող քրեական օրենսգրքի՝ Նոր օրենսգրքում ամրագրված է օրենսգրքում օգտագործվող մի շարք հասկացությունների բովանդակությունը բացահայտող առանձին նորմ, որում, ի թիվս սույն հոդվածում վերլուծված հասկացությունների, բացահայտված են նաև մի շարք այլ հասկացություններ (օրինակ՝ «իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունը օգտագործել», «խաբեություն», «պարբերաբար», «շանտաժ», «վստահությունը չարաշահել» և այլն): Այնուհանդերձ, ինչպես ՀՀ գործող քրեական օրենսգրքում, այնպես էլ Նոր օրենսգրքում ամրագրված են բազմաթիվ գնահատողական հասկացություններ, որոնց բովանդակությունը լիարժեք բացահայտված չէ, և դրանց մեկնաբանությունը թողնված է իրավակիրառողի հայեցողությանը:

Վերոնշյալ հայեցողության շրջանակներում իրականացվող մեկնաբանությունը կամայական լինել չի կարող, այն ենթադրում է հանցակազմի օբյեկտիվ և սուբյեկտիվ հատկանիշների օրենսդրական նկարագրում ամրագրված գնահատողական հասկացությունների համակողմանի վերլուծություն: Մասնավորապես, հանցակազմի օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշներից է հանրորեն վտանգավոր հետևանքը: ՀՀ գործող քրեական օրենսգրքում որոշ արարքների հետևանքներ բնորոշելու համար հաճախ օգտագործվում են այնպիսի գնահատողական հասկացություններ, ինչպիսիք են «*էական վնաս*», «*այլ ծանր հետևանքներ*», «*զգալի վնաս*», «*խոշոր չափի վնաս*» հասկացությունները:

«*էական վնաս*» հասկացությունը՝ որպես արարքի հետևանք, օգտագործվում է ՀՀ գործող քրեական օրենսգրքի մի շարք հոդվածներում (18-րդ հոդվածում, 199.1-ին հոդվածի 2-րդ մասում, 214-րդ, 284-րդ, 287-289-րդ, 298-րդ, 308-րդ, 309-րդ և 315-րդ հոդվածներում): Քննարկվող հասկացությունը բացահայտված է պետական ծառայության դեմ ուղղված հանցագործությունների համար պատասխանատվություն նախատեսող՝ ՀՀ գործող քրեական օրենսգրքի մի շարք հանցակազմերում: Մասնավորապես՝ 308-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ էական գույքային վնաս է համարվում հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի չափը գերազանցող գումարը կամ դրա արժեքը, 309-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հինգհարյուրապատիկի չափը գերազանցող գումարը կամ դրա արժեքը, իսկ 315-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հազարապատիկի չափը գերազանցող գումարը կամ դրա արժեքը: «*էական գույքային վնաս*» հասկացությունը բացահայտված է նաև զինվորական ծառայության դեմ ուղղված հանցագործությունների համար պատասխանատվություն նախատեսող՝ ՀՀ գործող քրեական օրենսգրքի համապատասխան գլխում: Այս համատեքստում հարկ է ընդգծել նաև, որ էական վնասը կարող է դրսևորվել նաև ոչ գույքային ձևով, իսկ ոչ

¹ Տե՛ս Ա.Վ. Վարդապետյան, Բլանկետային նորմերով հանցագործությունների որակման հիմնախնդիրները, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան, 2019, էջեր 335-337: Հասանելի է հետևյալ հղումով՝ http://ysu.am/files/25Anna_Vardapetyan.pdf

² Նոր օրենսգրքը հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.arlis.am/>

գույքային վնասի էական և ոչ էական տեսակների սահմանազատման հստակ չափանիշներ քրեական օրենսդրության մեջ առկա չեն:

«էական գույքային վնաս» հասկացությանն իրենց որոշումներում անդրադարձել են ՀՀ Վճռաբեկ և Սահմանադրական դատարանները: ՀՀ վճռաբեկ դատարանն իր 2013թ. հոկտեմբերի 18-ի թիվ ԼԴ/0207/01/12 որոշման 15-րդ կետում արձանագրել է. «(...)Եթե գույքային վնասի դեպքում նախատեսված է որոշակի շեմ, ապա ոչ գույքային վնասի էական կամ ոչ էական լինելու հանգամանքը պետք է յուրաքանչյուր գործով գնահատվի իրավակիրառողի կողմից՝ հաշվի առնելով տվյալ գործի հանգամանքները (այդ թվում՝ անձանց, կազմակերպություններին, հասարակությանը կամ պետությանը պատճառված բարոյական վնասի չափը, տուժողների քանակը, խախտված իրավունքների և ազատությունների բնույթն ու խախտման աստիճանը, հիմնարկության կամ ձեռնարկության բնականոն գործունեության խաթարման աստիճանը և այլն) (...)»¹:

Հետագայում Վճռաբեկ դատարանն իր 2019թ. դեկտեմբերի 20-ի թիվ ԿԴ3/0013/01/18 որոշման շրջանակներում, զարգացնելով վերոշարադրյալ իրավական դիրքորոշումը, արձանագրել է. «(...)Ոչ գույքային վնասի գնահատողական բնույթը հաշվի առնելով՝ յուրաքանչյուր կոնկրետ դեպքում անհրաժեշտ է համապատասխան դատավարական փաստաթղթերում պատճառաբանել և հիմնավորել վնասը որպես էական գնահատելու հանգամանքը(...)»²:

Սահմանադրական դատարանն իր 04.11.2014թ. թիվ ՍԴՈ-1174 որոշման 5-րդ կետում արձանագրել է. «(...)Վնասի էական լինելու հատկանիշը նույն կերպ չի դրսևորվում տարբեր իրավիճակներում: Այն ենթակա է գնահատման, որը պետք է իրականացնի իրավակիրառողը՝ ելնելով գործի կոնկրետ հանգամանքներից: Ընդ որում, գույքային վնասի դեպքում օրենսդիրն արդեն իսկ ուրվագծել է էական գույքային վնասի սահմանները:

Այլ է խնդիրը ոչ գույքային վնասի դեպքում, երբ վնասի էական լինելու հանգամանքի գնահատումը դժվարանում է այն առումով, որ օրենսդրորեն ուրվագծված չեն էական ոչ գույքային վնասի սահմանները: Մինչդեռ, հաշվի առնելով այն հանգամանքները, որ էական վնասը հանդիսանում է օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ, և որ տվյալ դեպքում ոչ միայն գույքային, այլ նաև ոչ գույքային վնաս կարող է պատճառվել, կարևորվում է հասցված ոչ գույքային վնասի էական լինելու հանգամանքի գնահատման համար անհրաժեշտ նախադրյալների առկայությունը, քանի որ դրանից է կախված ամբաստանյալի իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությունը(...)»³:

Վերոշարադրյալից բխում է, որ հանցագործությամբ պատճառված ոչ գույքային վնասի էական կամ ոչ էական լինելու հանգամանքը պետք է յուրաքանչյուր գործով գնահատվի իրավակիրառողի կողմից՝ հաշվի առնելով տվյալ գործի բոլոր հանգամանքները: Բացի այդ, իրավակիրառողը պետք է համապատասխան դատավարական փաստաթղթերում պատճառաբանի և հիմնավորի վնասը որպես էական գնահատելու հանգամանքը:

¹ Որոշումը հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=89554>

² Որոշումը հասանելի է հետևյալ հղումով՝ http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=13229323905402387

³ Որոշումը հասանելի է հետևյալ հղումով՝ <http://www.concourt.am/armenian/decisions/common/2014/pdf/sdv-1174.pdf>

«Այլ ծանր հետևանքներ» գնահատողական հասկացությունը՝ որպես արարքի կատարման հետևանք, նախատեսված է ՀՀ գործող քրեական օրենսգրքի քառասունհինգ ավելի հոդվածներում (127-րդ հոդվածի 3-րդ մասում, 128-րդ հոդվածի 3-րդ մասում, 131-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետում, 132-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետում, 132.2-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետում, 133-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետում և մի շարք այլ հոդվածներում): Մասնագիտական գրականության մեջ և իրավակիրառ պրակտիկայում որպես այդպիսի հետևանք ընդունված է համարել խոշոր արտադրական կամ այլ բնույթի վթարը, տրանսպորտի աշխատանքի կամ արտադրական գործընթացի երկարատև խափանումը, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների, հիմնարկների աշխատանքի կազմալուծումը, առանձնապես խոշոր չափերի նյութական վնասը, թելուզ մեկ մարդու մահը կամ նրա առողջությանը ծանր վնասի պատճառումը և այլն¹:

Վերոնշյալի համատեքստում հարկ է նշել, որ ՀՀ գործող քրեական օրենսգրքում գնահատողական հասկացությունները շատ հաճախ ձևակերպվում են որպես «այլ»: «Այլ ծանր հետևանքներ» հասկացությունից բացի՝ այդպիսիք են «անձնական այլ շահագրգռվածություն» (308-րդ, 311.1-ին, 314-րդ, 324-րդ, 352-րդ, 375-րդ, 154.7-րդ և մի շարք այլ հոդվածներում), «այլ առավելություն» (154.2-րդ, 200-րդ, 201-րդ, 223.2-րդ, 223.4-րդ, 311-րդ, 311.1-ին, 312-րդ, 312.1-ին, 312.2-րդ 364.1-ին հոդվածներում), «այլ կախվածություն» (62-րդ, 101-րդ, 119-րդ, 127-րդ, 140-րդ և այլ հոդվածներում), «այլ ստոր դրդումներ» (162-րդ հոդվածում), «հարկադրանքի այլ ձև, միջոց, եղանակ» (132-րդ և 223.3-րդ հոդվածներում) հասկացությունները: Լեզվական այս հնարքը թույլ է տալիս հնարավորինս ճիշտ բացահայտել հատկանիշը: Մասնավորապես՝ նորմերի դիսպոզիցիաներում «այլ» բառից առաջ հիշատակվում է կոնկրետ հատկանիշ, որի հետ համադրության մեջ՝ «այլ»-ը մեկնաբանվում է որպես հասարակական բնույթով ու աստիճանով մերձավոր տարր²: Այլ խոսքով՝ նման դեպքերում գործ ունենք նորմում հստակ սահմանված հետևանքներին հանրային վտանգավորությամբ հավասարագոր հետևանքի հետ:

Վերոնշյալ սկզբունքի հիման վրա Նոր օրենսգրքում որոշակիորեն ուրվագծվել են «էական վնաս» և «այլ ծանր հետևանքներ» հասկացությունների գնահատման չափանիշները, մասնավորապես՝ Նոր օրենսգրքում օգտագործվող հիմնական հասկացությունները սահմանող 1-ին հոդվածի 1-ին մասի 15-րդ կետի համաձայն՝ այլ ծանր հետևանք կամ այլ էական վնաս են համարվում օրենսգրքի հատուկ մասի համապատասխան հոդվածում, հոդվածի մասում կամ կետում թվարկված հետևանքներին համարժեք կամ համաբնույթ վտանգավորություն ներկայացնող հանգամանքները: Թեպետ թվարկված մյուս գնահատողական հասկացությունները շարունակում են նույնությամբ օգտագործվել Նոր օրենսգրքի մի շարք հոդվածներում, և դրանց վերաբերյալ Նոր օրենսգրքում հստակեցում առկա չէ, սակայն գտնում ենք, որ դրանց գնահատման և մեկնաբանման գործընթացում ևս անհրաժեշտ է առաջնորդվել վերոնշյալ սկզբունքով, մասնավորապես՝ բոլոր այն դեպքերում, երբ գնահատողական հատկանիշը ձևակերպված է որպես «այլ», հասկացու-

¹ Ст'у Полный курс уголовного права: В 5 т. / Под ред. докт. юрид. наук, проф., заслуженного деятеля науки РФ А.И. Коробеева. Т. V: Преступления против государственной власти. Преступления против военной службы. Преступления против мира и безопасности человечества. Международное уголовное право, էջեր 117-118:

² Ст'у **Գրիգորյան Մ.Վ.**, Հանցագործությունների որակման գիտական հիմունքները: Ուսումնական ձեռնարկ, երկրորդ լրացված վերահրատարակություն: Եր.: ՀՈՀ Հրատ., 2009, էջ 278:

յան բովանդակության բացահայտումը պետք է իրականացվի նորմում հստակ սահմանված և գնահատողական հասկացությանը նախորդող հետևանքների համատեքստում՝ դիտելով դրանք հասարակական բնույթով ու աստիճանով մերձավոր տարր:

Արարքի հետևանքները բնութագրող գնահատողական հասկացությունների թվին կարելի է դասել նաև «խոշոր վնաս» և «զգալի վնաս» հասկացությունները: ՀՀ գործող քրեական օրենսգրքի հատուկ մասի մի շարք նորմերում քննարկվող հասկացությունները բացահայտված են, մասնավորապես՝ օրենսդիրը հստակ սահմանել է, թե որ չափի վնասն է համարվում խոշոր կամ զգալի: Մի շարք հոդվածներում, սակայն, հասկացությունները հստակեցված չեն, և բացակայում են վերջիններիս բովանդակությունը բացահայտելու հստակ չափանիշներ (օրինակ՝ 245-րդ, 246-րդ, 248-րդ, 251-րդ, 252-րդ, 254-րդ, 257-րդ, 264-րդ, 294-րդ հոդվածներում): Նշված խնդիրն իր լուծումն ստացել է Նոր օրենսգրքում, մասնավորապես՝ 3-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետում հստակ սահմանվել են հափշտակության, պատճառված գույքային վնասի, հանցավոր ճանապարհով ձեռք բերված կամ ստացված գույքի կամ օգուտի մանր, խոշոր և առանձնապես խոշոր չափերը՝ ընդհանուր կանոնից որպես բացառություն նախատեսելով օրենսգրքի հատուկ մասով նախատեսված դեպքերը:

Հանցակազմի օբյեկտիվ կողմի հատկանիշներից է արարքի կատարման եղանակը: Վերջինս բնութագրող գնահատողական հասկացությունների շարքին են դասվում «առանձին դաժանությամբ», «շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով», «չարամտորեն» հասկացությունները:

Դատական պրակտիկայում ձևավորված մոտեցման համաձայն՝ «առանձին դաժանություն» հատկանիշն առկա է, երբ կյանքից զրկելուց առաջ կամ սպանության ընթացքում տուժողի նկատմամբ կիրառվել են տանջանքներ, խոշտանգումներ կամ նա ենթարկվել է ծաղրուծանակի, կամ սպանությունը կատարվել է այնպիսի եղանակով, որը հանցավորի համար ակնհայտորեն կապված է տուժողին առանձնահատուկ տանջանքներ պատճառելու հետ (մեծ թվով մարմնական վնասվածքներ հասցնելը, տանջալիորեն ազդող թույն օգտագործելը, մարդուն կենդանի կիզելը, երկար ժամանակ սնուցից, ջրից զրկելը և այլն), սակայն պետք է նկատել, որ սոսկ մարմնական վնասվածքների քանակն ինքնին հիմք չի կարող լինել արարքն առանձին դաժանությամբ կատարված որակելու համար:

Առանձին դաժանությունը կարող է դրսևորվել նաև նրանում, որ սպանությունը կատարվի տուժողի մերձավորների ներկայությամբ, և հանցավորը գիտակցի, որ իր գործողություններով նրանց տանջանքներ է պատճառում:

Հանցանքը համարվում է շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով կատարված, երբ հանցավորն ընտրում է այնպիսի եղանակ, որով վտանգ է սպառնում շրջապատին՝ մարդկանց, բնությանը, գույքին և այլն: Այդպիսի եղանակների թվին է դասվում պայթյունը, հրդեհումը, փլուզումներ կամ թունավորումներ առաջացնելը, ամբոխի մեջ տուժողի վրա կրակահերթ արձակելը, առավել վտանգի աղբյուր օգտագործելը և այլն¹:

ՀՀ գործող քրեական օրենսգրքի մի շարք հոդվածներում հանցանքի օբյեկտիվ կողմը կազմող արարքները բնութագրելու համար օգտագործվում է «չարամտորեն» հասկացությունը (173-րդ, 174-րդ, 187-րդ, 192-րդ, 196-րդ, 346-րդ հոդվածներում): Օրենսգրքում, սակայն, հստակեցված չէ, թե ինչ չափանիշներով է անհրա-

¹ Տե՛ս ՀՀ Գերագույն դատարանի պլենումի 1993թ. դեկտեմբերի 2-ի որոշումը: Հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=17974>

ժեշտ գնահատել արարքում չարամտության առկայությունը: Մեր կարծիքով՝ օրենսդիրը հնարավորինս պետք է ձեռնպահ մնա նման խնդրահարույց հասկացության կիրառումից, քանի որ արարքների չարամտորեն կատարումն ինքնին ընդգրկված է դիտավորյալ մեղքի ձևի ուղղակի դիտավորության տեսակի մեջ: Այս կասկածայությամբ հարկ է նշել, որ օրենսդիրը գնացել է քննարկվող հասկացությունը քրեական օրենսգրքի նորմերից հնարավորիս բացառելու ճանապարհով: Օրինակ՝ 2017 թվականին օրենսդիրը հարկը, տուրքը կամ պարտադիր այլ վճարը վճարելուց չարամտորեն խուսափելու համար պատասխանատվություն նախատեսող ՀՀ գործող քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածում կատարված համապատասխան փոփոխությամբ նորմի խմբագրությունից հանել է «չարամտորեն» հասկացությունը: Նոր օրենսգրքում քննարկվող գնահատողական հասկացությունը բացակայում է:

Հանցակազմի սուբյեկտիվ կողմի ֆակուլտատիվ հատկանիշներից է արարքի կատարման շարժառիթը: ՀՀ գործող քրեական օրենսգրքում արարքի կատարման շարժառիթը բնութագրող գնահատողական հասկացությունների շարքին են դասվում «շահադիտական դրդում», «անձնական այլ շահագրգռվածություն», «խուլիգանական դրդումներ», «վրեժի շարժառիթ», «այլ ստոր դրդումներ» հասկացությունները: Քննարկվող հասկացությունների բովանդակությունը բացահայտված չէ գործող ՀՀ քրեական օրենսգրքում, իսկ Նոր օրենսգրքում բացահայտված է բացառապես «շահադիտական դրդում» հասկացությունը, համաձայն որի՝ շահադիտական դրդում է համարվում իր կամ մեկ այլ անձի համար գույքային օգուտ ստանալու կամ գույքային ծախսերից կամ պարտավորություններից խուսափելու մղումը:

Վերոնշյալ մյուս հասկացությունները բացահայտված են տեսական գրականության մեջ, ինչպես նաև դատական պրակտիկայում: Մասնավորապես, «խուլիգանական դրդումներ» և «վրեժի շարժառիթ» հասկացություններին անդրադարձել է ՀՀ վճռաբեկ դատարանն իր 2008թ. հուլիսի 25-ի թիվ ԿԲ-48/08 որոշման շրջանակներում որոշման 17-րդ կետում արձանագրելով, որ «(...) Իրենց բովանդակությամբ խուլիգանական դրդումները ներկայացնում են բարդ շարժառիթ, որի մեջ միահյուսվում են անսահման եսամայությունը, խեղաթյուրված պատկերացումներն անձնական ազատությունների սահմանների մասին, բիրտ ուժի պաշտամունքը, իր անձի «առավելությունները» ընդգծելու մոլուցքը, «ինքնահաստատման» պահանջը, սանձարձակությունը, անպարկեշտ վարքագիծը, ցինիզմը, դաժանությունը, հանդգնությունը, ակնհայտ աննշան վիրավորանքի, չնչին առիթով ճիշտ արված դիտողության համար վրեժ լուծելը և այլն (...)»¹:

Քննարկվող որոշման շրջանակներում դատարանն արձանագրել է նաև, որ խուլիգանական դրդումներով կատարվող հանցագործություններում որոշակի դեր ունի նաև վրեժի գգացումը: Երբ հանցագործությունը տեղի է ունենում որպես աննշան առիթին տրված պատասխան գործողություն, դրանով արտահայտվում է և՛ հանցավորի անհարգալից, արհամարհական վերաբերմունքը հասարակության, և՛ վրեժի գգացումը տուժողի նկատմամբ: Նման դեպքերում հարցն անհրաժեշտ է լուծել առաջատար, գլխավոր, գերակայող շարժառիթը բացահայտելու միջոցով:

Հանցակազմերի օբյեկտիվ և սուբյեկտիվ կողմերի հատկանիշներում տեղ գտած գնահատողական հասկացություններից բացի՝ հարկ ենք համարում անդրադառնալ և վերլուծել նաև ՀՀ գործող քրեական օրենսգրքի, ինչպես նաև Նոր օրենսգրքի առանձին հանցակազմերում օգտագործվող, մեր կարծիքով առավել խնդրահարույց գնահատողական հասկացությունները:

¹ Որոշումը հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=47328>

Մասնավորապես, կարծում ենք՝ խնդրահարույց են գործող քրեական օրենսգրքի 45-րդ հոդվածում և Նոր օրենսգրքի 35-րդ հոդվածում օգտագործվող և արարքի հանցավորությունը բացառող «*ֆիզիկական կամ հոգեկան հարկադրանք*» և «*անհարթահարելի ուժ*» հասկացությունները: Հոդվածի պրակտիկ կիրառության առանձնահատկությունները բացահայտելու նպատակով նախ և առաջ անհրաժեշտ է բացահայտել «*հարկադրանք*» հասկացության բովանդակությունը, ինչպես նաև դրա հարաբերակցությունը քրեական օրենսդրության մեջ օգտագործվող «*բռնություն*» հասկացության հետ, որը ևս գնահատողական հասկացություն է:

Ս.Վ. Առաքելյանն իր «Պետական ծառայության դեմ ուղղված պաշտոնեական հանցագործությունների որակման և քննության մեթոդիկայի առանձնահատկությունները» վերտառությամբ աշխատանքի շրջանակներում հանգամանալից ուսումնասիրելով հարկադրանքի քրեաիրավական բնույթն ու էությունը, ընդհանրացնելով գիտության մեջ տարածված տեսակետները՝ սահմանել է հարկադրանքի հետևյալ քրեաիրավական բնութագիրը՝ դիտավորյալ, հանրորեն վտանգավոր, հակաիրավական ներգործություն անձի վրա, որն իրականացվում է ֆիզիկական և (կամ) հոգեբանական բռնության, ինչպես նաև այլ անօրինական գործողությունների (անգործության) միջոցով, տվյալ անձին որևէ գործողություն կատարելուն կամ դրանից ձեռնպահ մնալուն ստիպելու նպատակով¹:

Բռնության որպես քրեորեն հետապնդելի արարքի բնորոշումը տրվել է ՀՀ վճռաբեկ դատարանի 2012 թվականի նոյեմբերի 1-ի թիվ ԱՐԴ/0176/01/11 որոշման շրջանակներում: Որոշման 18-րդ կետի համաձայն՝ բռնություն է համարվում դիտավորությամբ, անձի կամքին հակառակ կամ առանց նրա կամքը հաշվի առնելու կատարված ցանկացած արարք, որի արդյունքում անձը զրկվել է կյանքից, կա՛մ սահմանափակվել է նրա ազատությունը, կա՛մ նրա առողջությանը վնաս է պատճառվել, կա՛մ նրան պատճառվել է ֆիզիկական ցավ, ֆիզիկական կամ հոգեկան տառապանք²:

Վերոնշյալ բնորոշումներից պարզ է դառնում, որ բռնությունը հանդես է գալիս որպես հարկադրանքի դրսևորման ձև: Ֆիզիկական հարկադրանքի դրսևորման ձև է ֆիզիկական բռնությունը, իսկ հոգեկան հարկադրանքի դրսևորման ձև՝ հոգեբանական բռնությունը: Այլ խոսքով՝ հարկադրանքն ու բռնությունը հարաբերակցվում են որպես բովանդակություն և ձև: Ասվածի համատեքստում հարկ է նշել, որ, ի տարբերություն գործող քրեական օրենսգրքի, Նոր օրենսգրքում բացահայտված է «բռնություն» հասկացության բովանդակությունը, մասնավորապես՝ բռնություն է համարվում այլ մարդու նկատմամբ դիտավորյալ ֆիզիկական ներգործությունը կամ այդ եղանակով նրան ֆիզիկական վնաս պատճառելը: Այս համատեքստում հարկ է ընդգծել, որ բռնություն պետք է համարել նաև անձին հոգեկան տառապանք պատճառելը:

Ինչպես ՀՀ գործող քրեական օրենսգրքի, այնպես էլ Նոր օրենսգրքի մի շարք հոդվածներում օգտագործվում է «*այլ բռնի գործողություններ*» հասկացությունը: Վճռաբեկ դատարանն իր վերոնշյալ որոշման շրջանակներում արձանագրել է նաև, որ «*այլ բռնի գործողություններ*» հասկացությունն անհրաժեշտ է մեկնաբանել «*բռնություն*» հասկացության համատեքստում:

¹ Տե՛ս Պետական ծառայության դեմ ուղղված պաշտոնեական հանցագործությունների որակման և քննության մեթոդիկայի առանձնահատկությունները: Գիտագործնական մեկնաբանություններ: Եր.: «Տիգրան Մեծ», 2015, էջ 128:

² Հասանելի է հետևյալ հղումով՝

<https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=80785>

Միևնույն ժամանակ, ի տարբերություն գործող կարգավորման, Նոր օրենսգրքի 35-րդ հոդվածում օգտագործվում է նաև «անհաղթահարելի ուժ» հասկացությունը, որի բովանդակությունը, սակայն, Նոր օրենսգրքում բացահայտված չէ, ինչը, մեր կարծիքով, խնդրահարույց է՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ քննարկվող հասկացությունն առավելապես օգտագործվում է քաղաքացիական իրավունքում, մասնավորապես՝ պայմանագրային իրավահարաբերություններում և բնորոշվում է որպես *տվյալ պայմաններում արտակարգ և անկանխելի հանգամանքներ*։ Հետևաբար, քաղաքացիական իրավունքում, ի տարբերություն քրեական իրավունքի, ինչպես օրենսդրորեն, այնպես էլ իրավակիրառ պրակտիկայի հիման վրա բացահայտված են «անհաղթահարելի ուժ» հասկացության բովանդակությունը, այն կազմող իրադարձությունների շրջանակը և կիրառման առանձնահատկությունները։ Հետևաբար, իրավակիրառ պրակտիկայում հնարավոր խնդիրներից խուսափելու նպատակով՝ անհրաժեշտ է կա՛մ բացահայտել հասկացության բովանդակությունն ու կիրառման շրջանակը, կա՛մ նորմի դիսպոզիցիան դարձնել բլանկետային՝ քաղաքացիական օրենսդրության վերաբերելի կարգավորումներին հղում կատարելու միջոցով։

Հարկ է անդրադառնալ նաև քրեական օրենսգրքում օգտագործվող «վիճակի խոցելիություն» և «անօգնական վիճակ» հասկացություններին, որոնք ՀՀ գործող քրեական օրենսգրքում բացահայտված չեն։

Քրեական իրավունքի տեսության մեջ «անօգնական վիճակ» հասկացությունը մեկնաբանելիս հեղինակները հիմնականում նշել են մարդկանց այն շրջանակը, ովքեր կարող են գտնվել անօգնական վիճակում, դրանք են՝ անչափահասները, տարեցները, ծանր հիվանդները, ինչպես նաև հոգեկան խանգարումներով տառապող անձիք։ Մեր կարծիքով՝ անօգնական վիճակը, ի թիվս այլնի, կարող է ներառել նաև քնած կամ հարբածության վիճակը։

Նոր օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ անօգնական վիճակում գտնվող անձ է համարվում այն անձը, ով, իր ֆիզիկական կամ հոգեկան վիճակով պայմանավորված, ի վիճակի չէ դիմադրություն ցույց տալու կամ դեկավարելու իր արարքը կամ գիտակցելու իր նկատմամբ կատարվող արարքի բնույթը, ինչպես նաև տասներկու տարին չլրացած անձը։ Նոր օրենսգրքի հեղինակները, ըստ էության, ուրվագծել են հասկացության սահմանները՝ չնախատեսելով անձանց կոնկրետ շրջանակ։ Այս առումով կիսում ենք Նոր օրենսգրքի հեղինակների մոտեցումը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ անօգնական վիճակում գտնվող անձանց շրջանակը խիստ լայն է, ուստի կոնկրետ շրջանակի նախատեսումը նպատակահարմար չէ։ Ինչ վերաբերում է «վիճակի խոցելիություն» հասկացության բովանդակությանը, ապա հարկ է նշել, որ Նոր օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ վիճակի խոցելիություն է համարվում այն վիճակը, որում հայտնված անձը չունի իր համար ընդունելի այլընտրանք, քան ենթարկվել իր նկատմամբ կատարվող չարաշահմանը։ Հարկ է նշել, որ նման ձևակերպման պայմաններում ստացվում է, որ վիճակի խոցելիությունը գնահատելիս իրավակիրառողը պետք է հիմք ընդունի բացառապես անձի սուբյեկտիվ դիրքորոշումը, ինչը, մեր կարծիքով, խնդրահարույց է։ Հետևաբար, գտնում ենք, որ վիճակի խոցելիություն պետք է համարել այն իրավիճակները, երբ անձը չունի ոչ թե կոնկրետ իր համար ընդունելի, այլ առհասարակ որևէ իրական և տվյալ իրավիճակում ողջամիտ այլընտրանք։

Գործող քրեական օրենսգրքում և նոր օրենսգրքում օգտագործվող գնահատողական հասկացությունների շարքին են դասվում նաև «կոչ», «քարոզ», «հրապա-

րակային արդարացում» հասկացությունները: Փորձենք քննարկվող հասկացությունների բովանդակությունը բացահայտել գործող քրեական օրենսգրքում բռնություն գործադրելու հրապարակային կոչերի, բռնությունը հրապարակայնորեն արդարացնելու կամ քարոզելու համար քրեական պատասխանատվություն նախատեսող 226.2-րդ հոդվածի համատեքստում: Այսպես՝ «հրապարակային կոչեր» ասելով պետք է հասկանալ անձանց գիտակցության և կամքի վրա այնպիսի ազդեցություն, որն ուղղված է անձանց նկատմամբ կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելուն:

«Հրապարակայնորեն արդարացնել» ասելով պետք է հասկանալ անձանց կյանքի և առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելու դեպքերի, ինչպես նաև բուն գաղափարի հրապարակային ընդունում և պաշտպանություն կամ նման բռնություն գործադրած անձանց արդարացում և պաշտպանություն: Այլ խոսքով՝ նշված դեպքերում անձը հրապարակային հայտարարում է, որ նման բռնությունը համարվում է ճիշտ, այն ենթակա է պաշտպանության և ընդօրինակման:

«Քարոզ» ասելով պետք է հասկանալ անձանց կյանքի և առողջության համար վտանգավոր բռնության գործադրելուն ուղղված գաղափարների տարածում:

Քրեական օրենսդրության մեջ օգտագործվող գնահատողական հասկացությունների շարքին են դասվում նաև «իրական հնարավորություն», «իրական վտանգ», «իրական սպառնալիք» հասկացությունները (օրինակ՝ գործող քրեական օրենսգրքի 42-րդ, 128-րդ, 137-րդ և այլ հոդվածներում): ՀՀ վճռաբեկ դատարանի 2012թ. հունիսի 8-ի թիվ ԿԴ1/0025/01/11 որոշման 17-րդ կետում դատարանն արձանագրել է՝ «(...) Սպառնալիքն իրական է համարվում այն դեպքում, երբ տուժողը բավարար հիմքեր է ունենում վախենալու դրա իրականացումից: Այլ կերպ ասած՝ տուժողը պետք է կարծի, որ սպառնալիքի իրականացումը հնարավոր է: Միևնույն ժամանակ վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ թեև սպառնալիքի իրական լինելը հավաստելու համար տուժողի սուբյեկտիվ ընկալման գնահատումը կարևոր է, սակայն արարքի որակման համար այն ածանցյալ նշանակություն ունի, առաջնայինն օբյեկտիվ իրադրության գնահատումն է: Հնարավոր են դեպքեր, երբ օբյեկտիվ իրադրությունը հիմք չի տալիս սպառնալիքն իրական գնահատելու համար, սակայն անձն իր հոգեկան լարված վիճակի, հոգեկան առանձնահատկությունների կամ այլ պատճառներով իրականությունը խեղաթյուրված է ընկալում՝ կարծելով, թե սպառնալիքն իրական է: Օբյեկտիվ իրադրության գնահատումը ենթադրում է, որ անհրաժեշտ է հաշվի առնել այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք են սպառնալիքի բովանդակությունը, սպառնալիք տալու եղանակը, դեպքի վայրը, ժամանակը, հանցավորի և տուժողի միջև հարաբերությունների բնույթը, հանցավորի անձը և այլն: Հետևաբար սպառնալիքի իրական լինելու հարցը յուրաքանչյուր կոնկրետ դեպքում պետք է լուծվի՝ գործի բոլոր հանգամանքները, այդ թվում՝ տուժողի սուբյեկտիվ ընկալումը հաշվի առնելով(...)»¹:

Այսպիսով՝ ամփոփելով ՀՀ գործող քրեական օրենսգրքում և Նոր օրենսգրքում տեղ գտած գնահատողական հասկացությունների համեմատական վերլուծությունը՝ գտնում ենք, որ.

ա. բոլոր այն դեպքերում, երբ գնահատողական հատկանիշը ձևակերպված է որպես «այլ» (օրինակ՝ «այլ ծանր հետևանքները», «անձնական այլ շահագրգռվածությունը», «այլ առավելությունը», «այլ կախվածությունը», «այլ ստոր դիրքումները»

¹ Որոշումը հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=78344>

և այլն), ապա բովանդակության բացահայտումը պետք է իրականացվի նորմում հստակ սահմանված և գնահատողական հասկացությանը նախորդող հետևանքների համատեքստում, քանի որ նման դեպքերում գործ ունենք նորմում սահմանված հետևանքներին հանրային վտանգավորությամբ հավասարազոր հետևանքի հետ.

բ. «չարամտությունը» ընդգրկված է դիտավորյալ մեղքի ձևի ուղղակի դիտավորության տեսակի մեջ.

գ. «ֆիզիկական կամ հոգեկան հարկադրանք» և «բռնություն» գնահատողական հասկացությունները հարաբերակցվում են որպես բովանդակություն և ձև: Ֆիզիկական հարկադրանքի դրսևորման ձև է ֆիզիկական բռնությունը, իսկ հոգեկան հարկադրանքի դրսևորման ձև՝ հոգեբանական բռնությունը: Կարծում ենք, որ բռնություն պետք է համարել այլ մարդու նկատմամբ դիտավորյալ ֆիզիկական ներգործությունը, այդ եղանակով նրան ֆիզիկական վնաս հասցնելը կամ հոգեկան տառապանք պատճառելը: Իսկ «այլ բռնի գործողություններ» հասկացությունն անհրաժեշտ է մեկնաբանել «բռնություն» հասկացության համատեքստում.

դ. իրավակիրառ պրակտիկայում հնարավոր խնդիրներից խուսափելու նպատակով անհրաժեշտ է կա՛մ Նոր օրենսգրքում բացահայտել օգտագործվող «անհաղթահարելի ուժ» հասկացության բովանդակությունն ու կիրառման շրջանակը, կա՛մ նորմի դիսպոզիցիան դարձնել բլանկետային՝ քաղաքացիական օրենսդրության վերաբերելի կարգավորումներին հղում կատարելու միջոցով.

ե. գործող քրեական օրենսգրքի 226.2-րդ հոդվածի համատեքստում «հրապարակային կոչեր» ասելով պետք է հասկանալ անձանց գիտակցության և կամքի վրա այնպիսի ազդեցություն, որն ուղղված է անձանց նկատմամբ կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելուն, «հրապարակայնորեն արդարացնել» ասելով պետք է հասկանալ անձանց կյանքի և առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելու դեպքերի, ինչպես նաև բուն գաղափարի հրապարակային ընդունում և պաշտպանություն կամ նման բռնություն գործադրած անձանց արդարացում և պաշտպանություն, «քարոզ» ասելով պետք է հասկանալ անձանց կյանքի և առողջության համար վտանգավոր բռնության գործադրելուն ուղղված գաղափարների տարածում.

զ. վտանգի, սպառնալիքի կամ հնարավորության «իրական» լինելը յուրաքանչ-յուր դեպքում կարող է որոշվել բացառապես գործի բոլոր հանգամանքների հիման վրա՝ այդ հանգամանքների լույսի ներքո գնահատելով նաև տուժողի սուբյեկտիվ ընկալումը.

է. «վիճակի խոցելիություն» պետք է համարել այն իրավիճակները, երբ անձը չունի որևէ իրական և տվյալ իրավիճակում ողջամիտ այլընտրանք, քան ենթարկվել իր նկատմամբ կատարվող չարաշահմանը:

ОСОБЕННОСТИ КВАЛИФИКАЦИЙ ПРЕСТУПЛЕНИЙ ПРИ ОЦЕНОЧНЫХ ПОНЯТИЯХ (СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ ДЕЙСТВУЮЩЕГО УГОЛОВНОГО КОДЕКСА И НОВОГО УГОЛОВНОГО КОДЕКСА РА)

Анна Вардапетян

*Доцент кафедры уголовного права ЕГУ,
кандидат юридических наук*

Лала Бегоян

*Старший юрист юридического департамента
аппарата Премьер-министра РА*

Эффективность борьбы с преступностью и легитимность этого процесса зависят от содержания Уголовного кодекса. Никто не может быть признан виновным в совершении преступления, если в соответствии с действующим в момент совершения деяния внутригосударственным или международным правом оно не считалось уголовным преступлением (*nullum crimen, nulla poena sine lege*). Задача законодательного органа - как можно четко определить конкретное деяние, которое считается преступлением, а также предусмотренное за него наказание, поскольку лицо не может быть привлечено к ответственности за деяние, которое не предусмотрено действующим законодательством. Однако в ряде статей как действующего, так и нового (подписано 27.05.2021г., вступит в силу 01.07.2022г.) Уголовного кодекса РА использовано большое количество оценочных понятий (признаков). В рамках данной работы изучены оценочных понятия (признаки), используемые как в действующем так и в новом Уголовного кодексе РА, для выявления проблем, возникающих в процессе их толкования и квалификации преступлений. Для обеспечения системности анализа мы рассмотрели оценочные понятия объективных и субъективных признаков преступлений.

PECULIARITIES OF QUALIFICATIONS OF CRIMES IN CASE OF VALUE-BASED ABDUCTIONS (COMPARATIVE ANALYSIS OF THE ACTING AND NEW RA CRIMINAL CODE)

Anna Vardapetyan

*Associate Professor at the YSU Chair of Criminal Law,
Candidate of Law*

Lala Begoyan

*Senior lawyer of the Department for Legal of the Prime
Minister Office of the Republic of Armenia*

The effectiveness of the fight against crime and the legitimacy of this process depend on the content of the Criminal Code. No one shall be found guilty of a crime and be punished unless it is expressly provided by law (*nullum crimen, nulla poena sine lege*). The task of the legislature is to define the specific act that is considered a crime and the punishment provided for it in a clear and certain manner, since a person cannot be held liable for an act that does not satisfy the principle of legal certainty. However, in a number of articles of both current and new (signed on May 27, 2021, will enter into force on July 1, 2022) RA Criminal Codes, a large number of evaluative concepts are used. Therefore, within the framework of this work, we studied evaluative concepts (signs) used both in the current and in the new RA Criminal Codes to identify problems arising in the process of their interpretation and qualification of crimes. To ensure the systematization of the analysis, we examined the evaluative concepts of objective and subjective elements of crimes.

Բանալի բառեր - հանցագործության որակում, գնահատողական հասկացություններ (հատկանիշներ), քրեաիրավական նորմերի մեկնաբանություն, իրավական որոշակիություն, իրավակիրառի հայեցողություն, էական վնաս, այլ ծանր հետևանքներ, շատերի կյանքի համար վտանգավոր եղանակ, անձանական այլ շահագրգռվածություն, անհաղթահարելի ուժ, վիճակի խոցելիություն, անօգնական վիճակ, իրական վտանգ, հրապարակային կոչ:

Ключевые слова: квалификация преступлений, оценочные понятия (признаки), толкование уголовных норм, правовая определенность, усмотрение правоохранителя, значительный ущерб, другие тяжёлые последствия, способом опасным для жизни многих людей, другие личные интересы, непреодолимая сила, уязвимое и беспомощное состояние, реальная опасность, публичные призывы.

Key words: qualification of crimes, evaluative concepts, interpretation of criminal norms, legal certainty, discretion of the law enforcement officer, significant damage, other grave consequences, dangerous for the lives of many people, other personal interests, force majeure, vulnerability, helpless state, real danger, public appeals.